ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՄԽԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

MINISTRY OF EDUCATION AND SCIENCE OF REPUBLIC OF ARMENIA
YEREVAN STATE MEDICAL UNIVERSITY AFTER MKHITAR HERATSI

Հայաստան, 0025, Երևան, Կորյունի փ. 2 • 2 Koryun St., Yerevan, 0025, Armenia • Tel/Fax (374.10) 582532 • URL: www.ysmu.am • e-mail: info@ysmu.am

թիվ 09/572

«12» 03 2015 թ.

«ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ 11/16» ծածկագրով
շրջանակային համաձայնագրերի միջոցով
գնում կատարելու ընթացակարգի հնարավոր
մասնակիցների ղեկավարներին

Հարգելի մասնակից

«ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/16» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում **«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի** կարիքների համար անհրաժեշտություն է առաջացել ձեռքբերելու Գնումների աջակցման կենտրոնի և Ձեր միջև կնքված շրջանակային համաձայնագրով նախատեսված ապրանքները:

*Սույն հրավերի (ծանուցման) ծածկագիրն է հանդիսանում «ՇՀԱՊՁԲ-11/16-13 (ԵՊԲՀ)»*

Հայտնում ենք, որ գնման առարկայի վերաբերյալ Ձեր կազմակերպության հայտն անհրաժեշտ է ներկայացնել ք. Երևան, Կորյունի 2 հասցեով, վարչական մասնաշենք, 2-րդ հարկ գնումների բաժին, մինչև 2015թ. մարտի 24-ը, ժամը 12:30-ը: *Ընթացակարգի հայտերը ստանում և հայտերի գրանցամատյանում գրանցում է համաձայնողով քարտուղար Սյուզաննա Ստեփանյանը: Հայտերը քարտուղարի կողմից գրանցվում են գրանցամատյանում՝ ըստ ստացման հերթականության, ծրարի վրա նշելով գրանցման համարը, օրը և ժամը:*

Հայտերը կբացվեն **«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի** շենքում, ք. Երևան, Կորյունի 2 հասցեով, վարչական մասնաշենք, 2-րդ հարկ, 2-րդ դահլիճում, 2015թ. մարտի 24-ին, ժամը 12:30-ին:

*Գնման առարկա է հանդիսանում «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի կարիքների համար բժշկական սարքավորումների և գործիքների ձեռքբերումը:*

*«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի կարիքների համար բժշկական սարքավորումների և գործիքների մատակարարման (մատուցման, կատարման) (որոնք կազմված են 66 չափաբաժիններից), տեխնիկական բնութագիրը, ինչպես նաև գնման առարկայի մասնագիրը, տեխնիկական տվյալները և այլ ոչ գնային պայմանները ամբողջական և համարժեք նկարագրությունը կազմում են պայմանագրի անբաժանելի մասը, որի նախագիծը ներկայացված է հրավերի (ծանուցման) N 1 հավելվածում:*

*Մասնակիցները հայտով ներկայացնում են իրենց կողմից հաստատված՝*

*ա. գնման ընթացակարգին մասնակցելու դիմում (Հավելված N 5), ընդ որում պարտադիր է նշել Մասնակցի էլեկտրոնային հասցեն,*

*բ. գնային առաջարկ (Հավելված N 5.1): Մասնակցի գնային առաջարկը ներկայացվում է ինքնարժեք և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով:*

Հայտն անհրաժեշտ է ներկայացնել «ԳԱԿ- ՇՀԱՊՁԲ -11/16» ընթացակարգի հրավերով սահմանված կարգով:

Կից ներկայացնում ենք կնքվելիք պայմանագրի նախագիծը:

*Մասնակիցների կողմից որպես համարժեք ապրանքներ ներկայացնելու դեպքում գնային առաջարկում ներառել նաև դրանց տեխնիկական բնութագրերի նկարագրությունները ,պարտադիր նշելով "համարժեք" բառը:*

Մասնակցի կողմից հայտի ներկայացումը պարտադիր չէ:

*«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի էլեկտրոնային փոստի հասցեն է՝ marketing.ysmu@gmail.com:*

Եթե, Հրամանով հաստատված ցանկում ներառված կոնկրետ գնման գործընթացի մասով, Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտով նախատեսված է, որ մասնակիցը Օրենքի 5-րդ հոդվածով նախատեսված պահանջներին իր տվյալների համապատասխանության պահովման և/կամ գնահատման համար պետք է պատվիրատուին ներկայացնի այլ (լրացուցիչ) փաստաթղթեր և/կամ տվյալներ, ապա նշված փաստաթղթերը և/կամ տվյալները պատվիրատուին ներկայացնում է ընտրված մասնակիցը՝ մինչև կարգի 110-րդ 7)-րդ մասով սահմանված կարգով պայմանագրի կնքումը: Ընդ որում՝

- նման փաստաթղթերի և/կամ տվյալների ներկայացման և գնահատման կարգը սահմանվում է շրջանակային համաձայնագրով՝ հիմք ընդունելով Օրենքի 31-րդ հոդվածի 5-րդ մասի և կարգի 75-րդ կետի պահանջները,

- նման պահանջի դեպքում, մասնակիցներից պահանջող փաստաթղթերի ցանկը և վավերապայմանները, ինչպես նաև մասնակցության իրավունքի և որակավորման գնահատման կարգը պետք է նախատեսված լինի շրջանակային համաձայնագրեր կնքած մասնակիցներին պատվիրատուի կողմից ուղարկվող հրավերով (ծանուցումով)՝ հղում կատարելով Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտի համապատասխան (կոնկրետ) դրույթին ի կատարումն որի պահանջվում են լրացուցիչ փաստաթղթերը և/կամ տվյալները:

*Հարգանքով՝*

Պրոռեկտոր՝ Ա.Մ. Մինասյան